


1126

1
U-20



01 JUL 2009

1908 - 1919

Ս. ՍԱՊՈՅ-ԿԻՆԵԱՆ

ՀԵՐԴԵՐ

ԻՐ ԳԼՈՒԳԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՐԵՐԸ

Ե. ԳՐԱԿ

Տպագր. Բ. ՏԵՂԻԱՆԻԱՆ

1909

92

Հ-56

1
U-20
my

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՐԱԼԵԱՆ



ՀԵՐԴԵՐ

Ե Ի

ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ



Լ. ՊՈՒՐՍ

Տպագր. Տ. ՏՅՂՐԱՄԱՃԵԱՆ

1909



Տպագրութիւն Տ. ՏՕԼՐԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Ֆիննանձրար, Շարգ խան, Թիւ 12



1156
42.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

« ԶԵՐԳԵՐ ԵՒ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅՏԵԱՑՔՆԵՐԸ », որպէս դասախօսութիւն, կարդացուած է Սկիւտար՝ « Յառաջադիմական Միութեան » լսարանի մէջ՝ 1909 թ. Նոյեմբերի 15-ին :

Տալիս ենք այդ դասախօսութեան համառօտութիւնը :

Մեր համոզմունքն է, որ Թիւրքիայի սահմանների մէջ ամփոփուած բոլոր ժողովուրդները, առանց ցեղի եւ ծագման խտրութեան, պատմական այս բոլորին, հեռու անջատողական գաղափարներից եւ միտումներից, իրենց անմիջական շահից՝ բոլոր այն գիտակցութիւնը պիտի ունենան, թէ համերաշխաբար ապրելով եւ գործելով է, որ կարելի պիտի լինի այս երկրի մէջ արդեամբ ստեղծել իրերի այնպիսի մի ՆՈՐ ԿԱՅՈՒԹԻՒՆ, ուր բոլոր ազգերը՝ իրենց ՊԱՏՄԱՆ—ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆԸ պահելով հանդերձ՝ քաղաքացիական ընդհանուր կապերով միացած, հաւասար պարտականութիւն եւ իրաւունք ստանձնելով՝ կարողանային լուծել այն մի կարգ կնճռոտ խնդիրները, որ դըրուած է բոլորի առաջ եւ որոնց բարեյաջող լուծումը ամէնքին էլ հաւասարապէս պիտի հետաքրքրի :

17 եւ 18—րդ դարերու Գերմանիայից եւ այդ ժամանակների մտածողների մտքերից մենք շատ բան ունինք ուսանելիք :

Այս նպատակով էլ օգտակար համարեցինք ընթերցողներին յարաբերութեան մէջ դնել Զերդերի մտածմունքների հետ, որքան էլ որ իրեն հակակարծիք լինենք մի բանի էական կէտերի մէջ :

Ս. ՍԱՊԱՆԶ-ԳԻՒԼԵԱՆ

17 Նոյեմբերի 1909 թ.

Կ. Պոլիս



Հ Ե Ր Դ Ե Ր

ԵԵ

ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ



Ազնիւ հայրենակիցներ !

Այսօրուան դասախօսութեանս նիւթը պիտի լինի « ՀԵՐ-
ԴԵՐԸ ԻՒ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ » :

Հեղինակի մտքերին ևս պիտի մօտենամք միայն այնքան,
որքան որ ինձ պէտք են՝ իր « քաղաքական » տեսութիւնները
պարզելու :

Բայց խնդրին ուղղակի զիմեւոց առաջ՝ նախ մի քանի
խօսք կուգէի ասել այն միջավայրի և պատմական այն շրջանի
(մոմենտի) մասին, երբ Հերդերը ասպարէզ է գալիս :

Մինչև Հերդեր՝ քաղաքականապէս հարիւրաւոր կտորների

բաժանուած Գերմանիայի մէջ՝ մտաւորական գործունէութեան արտաքին կարգի մի շարժում սկսուած էր արդէն :

Չանքը , ճիգը , աշխատանքը թէեւ ընդհանուր էր , բայց ամէն ինչ ցրուած , կղզիացած , իրարուց անկախ :

Չկար անտեսական , քաղաքական միութիւն , չկար եւ մտաւորական միութիւն . այնպէս որ՝ ժամանակի տիրապետող առաջին յատկանիշն էր քաժանակաւնութիւնը ամէն տեսակէտով :

Իրաւ է , երբեմն երբեմն ընդհանուր գերմանական գիտակցութիւն յառաջացնելու ազօտ նշոյլներ երեւում էին . բայց տեսական ոչինչ չէր մնում , ու ծայրայեղ կոստրակացումը շարունակուում էր առօրեայ իրականութիւնը լինել :

Գերմանական ընդհանուր մի պետութիւն չկար , չկար էլ ընդհանուր մի մայրաքաղաք . հանրական մի կեդրոն , զէպի ուր դառնային ամէնքի աչքերը : Պրանսիայում՝ դրա հակապատկերն էր . այնտեղ մտաւորական կեանքը կեդրոնացած էր Պարիզի մէջ . « լուսոյ ճառագայթները » այնտեղից էին տարածուում երկրի ամէն կողմերը : Գերմանիան մտաւորական այդպիսի հնոց չուներ : Բերլին , Վիեննա , Գրեզգէն , Քէզնիկըսերգ՝ դրանք շատ հեռու էին Պարիզի գերը կատարելուց :

Միայն այդ չէ . կոտորակալ Գերմանիայի մէջ մտաւորական երկրորդական կեդրոնները ո՛չ մի տեսակէտով չէին կենթարկուում շատ ու քիչ կեդրոն համարուող քաղաքների ազդեցութեանը եւ նրանց հակակշիւն : Ամէն երկիր , ամէն քաղաք , մտաւորական ամէն կեդրոնափայր ունէր իր սեպհական , ինքնուրոյն , անջատ կեանքը : Եւ նկատելին այն էր , որ իրարուց բոլորովին անկախ այդ փայրերի գործունէութիւնը աճանքան աւելի ծաւալուն բնաւորութիւն էր առնում , որքան որ ինքնախոսաւորութիւնը աւելի լայն չափեր էր ստանում :

Մտաւորական գործունէութեան այդ չափազանց ցրուա-

ծութիւնը իր այն առաւելութիւնը ունէր , որ նա թոյլ էր տալիս միջակ ոյժերին յամը , բայց ինքնուրոյն կերպով զարգանալու : Տեղական՝ երկրորդական ոյժերը , փոքրիկ տաղանդները անմիջապէս չէին ծմլուում կեդրոնի հանձարներից . սրանք ազատ ժամանակ ունէին փթթելու , ունձանալու եւ իրենց ամբողջական կարողութիւնները երեւան դնելու :

Տիրող երկրորդ յատկանիշն էր կոստրակացիականը (համաշխարհաքաղաքացիութիւնը) : Շատ ու քիչ կրթուած , փիլիսոփայելու միտք ունեցող ամէն գերմանացու համար , բաժանաբաժան Գերմանիայի որ մասնորումն էլ որ ապրելիւ լինէր , նախորդ եւ ներկայ դարու հասկացած « հայրենասիրական զգացմունքը » գոյութիւն չուներ : Նրանք կոստրակացիներ (համաշխարհաքաղաքացիներ) էին , ժխտող առանձին հայրենիքների գաղափարի . — Մարդկութիւն՝ սա էր նրանց ընդհանուր նշանարանը :

Տաննելութեանը գարու Գերմանիայի գրութիւնը պարզում է թէ ի՛նչու համար նրանք կոստրակացիներ էին եւ ո՛չ թէ հայրենասերներ : Իրօք չկար Գերմանիա՝ կային Գերմանական պետութիւններ՝ ամէն մեծութեան ու ձեւի : Եւրփոքրիկ պետութիւնները ո՛չ միայն ամենափոքր ջանք անգամ չէին թափում միանալու , այլ նրանք ուղղակի սոսկում էին իրական համերաշխութիւնից , մտածելով թէ մի՞ գուցէ այդպիսով վտանգեն իրենց անկախութիւնը : Պրուսական , Աւստրիական հայրենասիրութիւն , որպէս զինւորական հպարտութեան մի գործ , մտամբ գոյութիւն ունէր , բայց ընդհանուր Գերմանական հայրենասիրութիւն՝ դա գոյութեան նշոյլ անգամ չուներ : Բայց սա գեւա բաւական չէ կոստրակացիութիւն , որպէս փրոզ յատկանիշ , բացատրելու համար . որովհետեւ պատմութիւնը մեզ շատ օրինակներով ցոյց է տուել , որ եղել են երկիրներ , ուր ազգային միութեան ընդհանուր յենարանը

խորտակուել, բեկորների է ենթարկուել և քաղաքականապէս զանազան մասերի բաժանուած կտորները գտնուել են ամենա-
աննպաստ պայմանների ներքոյ, սակայն, այնուամենայնիւ, ընդ-
հանուր հայրենիքի սէրը, ընդհանուր միութեան գաղափարը
շարունակել է վերապրել, գոյութիւն ունենալ: Այն ժամա-
նակ՝ երբ փշուր—փշուր եղած Խտալիա կար միայն, Խտալա-
կան հայրենասէրներ միշտ անպակաս են եղել: Վերամանիաի
մէջ, ընդհակառակը, փիլիսոփաների, մտածողների կատա-
րեալ անտարբերութիւնը զէպի Վերամանական ազգի քաղաքա-
կան շահերը՝ յառաջանում էր այն հաստատուն գաղափարից,
որ նրանք չենէին հայրենիքի եւ հայրենասիրութեան մասին:
Նրանք հայրենիք ասելով հասկանում էին Մարդկութիւնը,
հետեւաբար իրենց հայրենասիրութիւնը զէպի նա էր ուղ-
ղւում: Մերել բացառապէս իր հայրենիքը, տարածութեւն սէր
ցոյց տալ զէպի միմիայն Մարդկութեան այդ մի կտորը, ասել
միւս ազգութիւնները, նրանց թշնամիներ համարել, — դա՛ 18-րդ
դարու Վերամանական փիլիսոփաների համար՝ հակաքաղաքակը-
թական մի բնթացք, հակամարդկային մի բարբարոսութիւն
էր, որից նրանք խորշելով խորշում էին: Մարդկայնական,
կոսմոպոլիտական այդ գաղափարները տիեզերական ճշմարտու-
թիւններ էին նկատուում. նրանք այն աստիճանի հաստատուած,
վարկ էին ստացած, որ այդ մասին, մտածողների շարքերի մէջ,
վիճարանել անգամ չէր կարելի: Կոսմոպոլիտիսմը մի անվի-
ձելի ընդհանուր սկզբունք էր, որից պիտի բզկէին երկրոր-
դական բոլոր հայեցակէտերը:

Եւ այսպէս, մի կողմից կար ընդհանուր ջանք զէպի գի-
տական, գրականական, փիլիսոփայական աշխատանք, միւս
կողմից՝ կատարեալ անտարբերութիւն զէպի երկրի քաղաքա-
կան ու տնտեսական շահերը: Բաժանականութիւն եւ կոսմո-
պոլիտիսմ, — ահա ժամանակի երկու էական յատկանիշները:

Այսպէս էր մտաւորական միջավայրը, ընդհանուր տրա-
մադրութիւնը, երբ ասպարէզ եկաւ Հերգերը:

Ծնած Արեւելեան Պրուսիայի Մոհրունգեն փոքրիկ քա-
ղաքում՝ Հերգերը լիակատար կրթութիւն ձեռք բերելու
անյադ տենչ ունէր: «Ամէն բան գիտենալ», — սա էր իր
մղիչ գաղափարը: Բնական ընդունակութեանը, վառ երեւա-
կայութեանը միացրած ունէր անսպառ համբերութիւն և ան-
խոնջ աշխատանք: Զօրեղ կամքի հետ՝ ունէր շեշտուած ան-
հատականութիւն:

Հազիւ իր երկրորդական կրթութիւնը աւարտած՝ տեղա-
կան քահանայն նրա տրամադրութեան տակն է գնում իր հա-
րուստ գրողարանը, մի կահաւորուած սենեակով: Այստեղ՝
նա անձնատուր է լինում լուրջ ընթերցանութեան և ձեռք է
բերում բազմակողմանի գիտութիւն: Նա կարդում, ուսումնա-
սիրում է յոյն, լատին, ֆրանսիացի, գերմանացի բոլոր յայտնի
հեղինակների գրածները: Եւ՝ արտաքոյ կարգի օժտուած մի
քիչոգութեամբ՝ ո՛չ միայն իր բոլոր կարգացածները միտքն է
պահում, այլ զարմանալի մի գիւրութեամբ էլ մարտում:

Հերգերը, այնուհետեւ, մտնում է ֆէոյնիկսերիցի հա-
մալսարանը: Նա թէեւ մասնաւորապէս սովորում է Աստուա-
ծարանութիւն, բայց ո՛չ նուազ եռանդով ու սիրով ուսումնա-
սիրում է արեւելեան բանաստեղծութիւնները, լեզուի ծագու-
մը, գեղարուեստի սկզբունքները, պատմութեան փիլիսոփա-
յութիւնը, ժողովրդական աւանդութիւնները, եայլն: Նա
հիմնական կերպով է սովորում լեզուները, որպէսզի ամէն
ժամանակների և ամէն ազգերի մէջ եղած գլուխ-գործոցները
կարգայ, հասկանայ և «անմիջական» կերպով ծաշակի այն՝ ինչ
որ անկարելի է թարգմանել, այն է՝ «բառերի գունաւորումը
և ոտանաւորների հնչականութիւնը»:

Որպէս 18-րդ դարու դաւան՝ Հերգերը ունի իր նախասի-

բութիւնները : Գէօթթէի , Շիլլէրի նման՝ նա էլ՝ յռնակաւ
գեղարուեստը ամենակատարեալն է համարում . հետեւաբար՝
առաջին քայլափոխից՝ ջատագով է հանդիսանում դասական
(կլասիքական) Իդիլային . թէև դա չի խանգարում , որ նա
չնրբողի եւ Միջին Դարը : Ժողովրդական բանաստեղծու-
թիւններն էլ նրա փայփայանքի առանձին առարկան են դառ-
նում : Վլանդինաւիայի եւ Նորմանդիայի ծովահէնների մղած
հերոսական կռիւնները եւ այդ պոթիւ հիւսուած երգերը՝ իրեն
առանձին հրապուրանք են բերում . թարգմանում է Ֆինների
եւ Վալդենների ժողովրդական երգերը , սքանչանում է նրանց
պարզութեան եւ թարմութեան վրայ . հրատարակում է Հա-
րաւային Ծովի բնիկների աւանդութիւնները . — այս տեսա-
կէտով՝ նա ժողովրդական բանահաւաքների (Ֆոլկ-լօրիտ) նա-
խահայրը կարող է համարուել :

Իր բազմակողմանի կրթութեամբ՝ ընդհանուր հիացումի
արժանի այդ երիտասարդը՝ դեռ հաղիւ թեւակոխած կեանքի
ասպարէզ , ուզում է ապրել , գործել այնպէս , ինչպէս իր
համոզմունքն էր թելադրում : Հասած էր ժամանակը՝ երբ
իր քաղաքական Հաւատամքը (կրեդոն) կիրառութեան մէջ պի-
տի գնէր :

Թէև ծնած Պրուսիայում , բայց գիտակցաբար , համոզ-
ւորւելով՝ նա իրեն կապուած չի համարում Պրուսիայի հետ :
Իր բարեկամ Համանի յորդորներին հակառակ՝ նա չի ուզում
ո՛չ ծանաչել , ո՛չ էլ յարգել « Պրուսական հայրենասիրու-
թեան զգացմունքը » . նա կոսմոպոլիտ էր , ծանաչում էր մի-
այն Մարդկութիւն . ուստի եւ գիտութեան ծառայութիւնից
խոյս է տալիս , որպէսզի Մարդկութեան մի մասի համար
միայն չաշխատի՝ ի ֆեսա ամբողջութեանը :

Փախտականը դեռ հաղիւ իր շունչը Ռիգա առած , այն-
տեղ՝ 1765-ին՝ մի ծառով արդարացնում է իր դիրքը :

« ՀԻՆԵՐԻ ՆՄԱՆ ԺՈՂՈՎՈՐԻՒ ԵՒ ՀԱՅՐԵՆԵՔ ՄԻՆԵ
ՈՒՆԵՆԵ » . — այս է իր թէզը , եւ ճառախօսը տալիս է իր
բացասական պատասխանը : Ահա իր այդ մապճմունքի ամփո-
փոյթը :

Հին Սիտէն* — պսում է Հերգեր — եւ նորագոյն ընկե-
րութիւնը բոլորովին տարբեր բաներ են : Հին ժամանակնե-
րում՝ ազատ քաղաքացիների գործունէութեան վեհագոյն նպա-
տակն էր հայրենիքի բարգաւաճումը եւ նրա մեծութիւնը : Հայ-
րենիքից աւելի բարձր շահ չկար նրանց համար : Արօն , բա-
րդականութիւն , աւանդութիւններ՝ ամէն ինչ սերտ կերպով
կապուած էին Սիտէի հետ . ամէն բան Սիտէից էր բղխում .
ամէն ինչ չքանում , անհետանում էր , երբ նա տապալւում ,
ընկնում էր : Հետեւաբար՝ հայրենասիրութիւնը պարտականու-
թիւններից առաջինը եւ հրամայականն էր : Հայրենասիրութեան
առաջ ամէն ինչ ջնջւում էր , ամէն պարտականութիւն բացար-
ձակապէս նրան էր ենթարկւում : Ուրիշ խօսքով՝ բոլոր առա-
քինութիւնները ամփոփւում էին հայրենիքի սիրոյն մէջ : Բայց
Լւերսլան , ֆրիստենայ , Լւերսլան , այլեւ՝ ոչնչով չի նմանում
հին քաղաքակրթութեան ո՛չ մեծ եւ ո՛չ էլ փոքր հասարակա-
պետութիւններին : Գարբի յառաջադիմութիւնը , եւ մանա-
ւանդ ֆրիստենայիւնը , նորագոյն ժողովրդներին աւելի բարձր
մտայղացման են բարձրացրել , այն է՝ Մարդկութեան վեհագոյն
գաղափարին : Ուստի հին տարամերժ հայրենասիրութիւնը
գոյութեան ո՛չ մի իրաւունք ունի . ինչո՞ւ համար օտար երկ-
րացուն թշնամի համարել , նրան առել , չսիրել . — ո՛չ , պէտք
է տեսնել , ծանաչել , սիրել բոլոր ժողովրդներին անխափ .

Սիտէ (Cité) բառը ներկայումս հոմանիշ է քաղաք բառին : Երբեմն
այդ բառը , ըստ երևոյթին , իր մէջ բովանդակում էր աւելի բարձր միտք .
նա գործ էր ածւում որպէս հոմարժէք Պեսուրիւն կամ Հասարակապետիւն
բառի :

ներանք բոլորն էլ անդամներ են Մարդկութեան, որը եւ կազմում է մեր իսկական հայրենիքը: «Մենք աւելի ազնիւ հերոսներ ունինք՝ քան Աբելէսը եւ աւելի բարձր հայրենասէրներ՝ քան Հորացիոս Ափլլէսը»: Ներկայ քաղաքակրթութեան յաղթանակը պիտի լինի ջնջել ազգերը իրարուց անջատող պատնէշները, ու այդպիսով միայն Մարդկութիւնը դարձնել ամբողջի հայրենիքը:

Այստեղ, սիրելի հայրենակիցներ, միջանկեալ կերպով ասեմ, անշուշտ դուք նկատեցիք կոսմոպոլիտ Հերդերի միակողմանիութիւնը: Որքան էլ 18-րդ դարու փիլիսոփայութեան զուտ, այնուամենայնիւ նա մեզ ներկայացաւ սահմանափակ ուղեղով, այն տեսակետով՝ որ Մարդկութիւնից դուրս համարեց բոլոր այն ժողովուրդներին եւ ազգերին, որոնք չեն մտած քրիստոնէութեան մէջ, — ինչ որ գլխովին սխալ է եւ հակասակ քաղաքակրթութեան մատակարարած բազմազան իրողութիւններին:

Բայց շարունակենք մեր խօսքի թելը:

Հերդերը, սակայն, ամէն տեսակի հայրենասիրութիւն, հայրենասիրութիւն բոլոր ինքեան՝ չի գտաւ պարտում: Նա էլ ինքն իրեն հարենասէր է համարում: Նա ընդունում է, որ զարգացած մի մարդ, զէպի Մարդկութիւնը տածած իր արեւդերական սիրոյն մէջ անգամ, իր սրտի խորքում մի առանձին զգացմունք ունի զէպի իր ծննդավայրը: Որովհետեւ ոչ մի բան այնքան օրինական եւ անմեղ չէր կարող լինել, որքան այդպիսի մի զգացմունք. բայց դա միայն այնքան, որքան որ բանականութիւնը թոյլ է տալիս, եւ ոչ աւելի: Վեցուն՝ որով անհատը խօսում է, տունը՝ ուր նա մեծացել է, բնութենիքը՝ որ նրան սնուցել է, հանրական աւանդութիւնները եւ յիշատակները՝ որ նրան կապում են իր համաքաղաքացիների կամ համագիւղացիների հետ, — դրանք բոլորը բնական այնպիսի

զգացմունքներ են զարթեցնում եւ վառ պահում, որ անկարելի է արմատախիլ անել կամ չունենալ. սակայն եւ այնպէս, շատ նեղ սահմանների, մասնաւոր ծննդավայրի այդ սէրը երբէք նրան մոռացնել չպիտի տայ այն պարտականութիւնը, որ նա ունի զէպի Մարդկութիւնը, — վերջինս է որ անհատի, մանաւանդ զարգացած, կրթուած անհատի համար, գերակշիռ դեր եւ վճռական նշանակութիւն պիտի ունենայ:

Այդպէս, Հերդերի հասկացածը մի տեսակ զգայնական հայրենասիրութիւն է, որ նրան աւելի կապում է ծննդավայրի տան, քաղաքի, գիւղի հետ, քան մի ազգութեան: Ոչինչ այնքան խոտելի, ոչինչ այնքան «ծիծաղելի» եւ «զգուշ» չէ Հերդերի համար, որքան շեշտուած, մոլեգին այն հայրենասիրութիւնը, որ առելութիւն եւ թշնամութիւն է ներշնչում զէպի ուրիշ ազգութիւնները եւ ժողովուրդները. «Դա մի յիմարութիւն է, բացականչում է Հերդեր, որ կարող է տանել զէպի ոճիր»: Ու շարունակում է. «Բոլոր փառաւորների մէջ՝ իր ազգութեան փառաւորը, ինձ համար՝ ամէնից աւելի կատարեալ յիմարն է, ինչպէս որ իր ծննդեամբ կամ հարստութեամբ փառաւորը: Ի՞նչ է ազգութիւն: — Մի մեծ անմշակ պարտեզ, լի լաւ եւ վատ խոտերով: Ո՞վ կը ցանկանար այդ ամբոխի պաշտպանութիւնը յանձն առնել, ուր արատը եւ յիմարութիւնը խառնում են արժանիքների եւ առաքինութիւնների հետ: Ո՞վ է այն Գոն-Քիշտը, որ այդ Գուլցիկոյի համար նիզակներ պիտի փշրէր ուրիշ ազգութիւնների զէմ»:

Մի անգամ երբ Հերդերը ժխտում է «հայրենասիրութիւնը», ինքն իրեն հետեւողական լինելու համար, պարզ է որ նա հակառակ պիտի լինէր եւ պատշաճ զայնախիլ: Եւ արդարեւ: Նա ստեղծում է «հայրենասիրութեան» գաղափարից հէնց նրա համար, որ նա տեղի եւ առիթ կարող է

տալ պատերազմների՝ հին, անցեալ պահանջների և պատմական զանազան իրաւունքների տեսակէտից : Մինչդեռ պատերազմը, իր աչքում, ո՛չ այլ ի՛նչ է, և թէ ո՛չ մի եղբայրասպանութիւն, միջադպշին մի ոճիր, քաղաքացիական մի կռիւ, որ իր առթած աղէտների և յառաջադրած հետեւանքների պատճառով՝ ասելի և խորշելի պիտի լինի կիրթ բոլոր մարդիկների համար : Ինչու համար պատերազմ, յարում է շերդեր, քանի որ Մարդկութիւնը մի մեծ հայրենիք է և ամէնքի համար էլ բաւականաւոր տեղ կայ ընդ հանրական այդ օջաղի մէջ :

Շերդերը, ուրեմն, իր ժամանակակից բոլոր փիլիսոփաների նման, ծայրայեղօրէն լաւատես է՝ տիեզերական իւր յղացումի մէջ : Նա հաւատում է քնութեան նախանշանական ներգաշնակութիւններին :

Բայց ինչից են յառաջանում պատերազմները : — Շերդեր այստեղ դարձեալ իր դարու գաւաին է. նա վերաբերում է Լէյբնիցի, Ռուսսոյի, Բերնարդէն դը Վեն-Պիէռի ու այլ բընագանցագէտների (մետաֆիզիկոսների) կարծիքները, այն է՝ ընկերութեան ծոցից ծագում՝ առնող մեծ և փոքր բոլոր շարիքները, ամէն տեսակի ոճիրները և ներքին ու արտաքին պատերազմները առաջ են գալիս միմիայն մարդու մտածմունքներից, նրա ցանկութիւններից ու տենչանքներից, նրա գործած մոլորութիւններից և արատաւոր արարքներից. հետեւաբար անհատը՝ մանաւանդ զեկափարիչ գեր ունեցողը՝ եթէ ինքն իրեն ուղղութեան մէջ պահէ, ազատ է իրեն՝ իր շարիքներից, ազա ամէն ինչ խաղաղ, ներդաշնակ կերպով յառաջ կերթայ : “ Իրերի հեղինակի ձեռքից դուռն եկած ամեն ինչ լաւ է, մարդու ձեռքի մէջ է միայն, որ ամեն ինչ այրաւնուում է ” : “ Էմիլի ” այդ առաջին նախադասութիւնը հիւանդի կերպով արտացոլացնում է 18-րդ դարու երկրորդ

կիսուն յատուկ եղող լաւատեսութիւնը և նրա փիլիսոփայական հայեացքը գէպի ընկերային այնպիսի խոշոր երևոյթներ, ինչպիսին են պատերազմը և մարդկանց փոխադարձ յարաբերութեան շարժառիթները : *

Շերդերը շարունակում է ասելով, որ եթէ մարդիկ իրապէս խելօք, բանիմաց և առաքինի լինէին, — դրա հետեւանքը անպայման կը լինէր յարատեւ խաղաղութիւն՝ ամբողջ Մարդկութեան մէջ : Եւ ինչպէս Ռուսսոյի եռանդուն աշակերտ՝ իր մտածմունքը զարգացնելով՝ նա հաստատում է, որ պատերազմ և հայրենիք բառերը հոմանիշ են : — “ Հայրենիքներ արիւնահեղ կոռուի բռնութեամբ ուրիշ հայրենիքների հետ, գրում է նա դեռ 1794-ին, դա՛ մարդկային շեղումների ամենախաթար բարոյութիւնն է ” :

Ուրեմն ի՛նչ է ընդունում Շերդեր :

Ըշխատանքի, պայքարի, մրցումի խաղաղ, հանդարտ ձևը՝ գեղարուեստի, գրականութեան և մարդկային մտաւոր ստեղծագործութեան բոլոր ձիւղերի մէջ՝ առանց բիրտ բաղխումի, առանց արիւնահեղ ընդհարումի, որով ամէն ազգ, ամէն ժողովուրդ կարող կլինի՝ առանց որ և է արգելքի, մտաւորապէս զարգանալ, բարգաւաճիլ և մարդկային յառաջադիմութեան սատար ու քաղաքակրթութեան ազգակ դառնալ : — Մէկի յաղթութիւնը միւսին, մէկի յառաջադիմութիւնը միւսից, բացառապէս այս հողի վրան պիտի լինի :

Շերդերը այստեղ էլ հաւատարմօրէն արտացոլացնում է իր դարու փիլիսոփայական հայեացքը : Նա վերաբարձրում է Լէյբնիցի և Ռուսսոյի ծանօթ մտքերը, այն է՝ իրերի խիւար

* Ընկերային զանազան խնդիրների առթիւ 18-րդ դարու փիլիսոփայութեան տխուր հիմունքների մասին՝ մենք պիտի խօսենք ուրիշ անգամ ընդարձակօրէն :

կան իմաստն է ներդաշնակութիւն . արդարութիւնը եւ բարին յոյժեր են , որոնք՝ վերջ ի վերջոյ՝ ուղղութիւն պիտի տան տիեզերքին :

Մինչեւ այստեղ , հայրենակիցներ , Հերդերը մեզ ներկայացաւ որպէս կօստօպոլիս եւ թնագանցագիտ՝ մարդկանց փոխադարձ յարաբերութիւնները բացատրելու եւ հասկանալու տեսակէտից :

Այժմ՝ մօտենանք նրան որպէս գրական քննադատի . — այստեղ է , ահա՛ , որ Հերդերը երեւում է իր ինքնատիպ մտքերով , որ զանազան ուրապապոյտ ծանապարհներից անցնելուց յետոյ՝ պաշտպանում է այն , ինչ որ մեր օրերում կոչւում է ազգերի սրտմա-անհասական գոյութեան իրաւունքը :

Մինչեւ Հերդեր գրական քննադատութիւնը կատարւում էր վերացական սկզբունքների տեսակէտից , միահեծան բանականութեան անունով : Ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում միջախալի եւ իրականութեան վրայ : Ամէն ինչ վարդապետական (դօգմատիքական) էր . նախապէս չափուած , ձեւուած բանաձեւերի մի խճողուածք ընդունուած էր որպէս չափանիշ (կրիտերիում) , նրա կանոններին եւ կանխապէս գծուած պահանջներին պիտի համապատասխանէին գրական ամէն երկեր՝ որպէսզի ներքոյի արժանանալու իրաւունք ստանային . հակառակ դէպքում՝ մտաւոր արտադրութիւնը ո՛չ մի նշանակութիւն չէր ունենալ՝ եթէ հրաշակերտ անգամ լինէր :

Հերդերը իր ընդգրկած ա ս նոր ասպարէզի մէջ՝ թէեւ դարձեալ խօսում է Վարդկութեան անունով , բայց այս պարագային՝ բնագիտական ամպերից վայր իջնելով՝ հարցնում է թէ ինչ է Վարդկութիւն : Ու քննադատը գտնում է , որ Վարդկութիւնը մի վերացականութիւն , տարտամ մի ընդհանրականութիւն չէ , եւ ո՛չ էլ մարդկային էակների անորոշ մի թիւ , որոնք բոլորն էլ ամէն բանով իրարու նման են՝ բացի տարիքից եւ

հանգերձներից : — Ո՛չ . Հերդերի ասելով Վարդկութիւնը մի լայնածաւալ ընտանիք է , որի անդամներն են ազգութիւնները , որոնցից իւրաքանչիւրը ունի իր յատուկ բնաւորութիւնը , քառեխառնութիւնը , իր սեպհական բարք ու վարքը , հասկացողութիւնները , իր առանձնաշարժութիւնները , ինքնասպառնալիքներ , անհասկանութիւններ՝ վերջապէս :

Արդ , որպէսզի կարելի լինի մի ազգի մտաւոր , հոգեկան աշխարհը հիմնովին ծանաչել եւ արտացոլացնել նրան՝ իր մասնաւոր դիմագծերով , — անհրաժեշտ է , որ գրական քննադատը բազմակողմանի կերպով եւ խորապէս ուսումնասիրի այդ ազգի անցեալը , քաղաքակրթական այն շրջանները , որից նա անցել է , իրականութիւնը՝ որի մէջ նա ապրում է . վեր հանէ նրա սրտի թագուն ձգտումները եւ կազմէ այն հաւանորոշութիւն , որով մի ազգ-անհաս արքերուում է մի ուրիշ ազգ-անհասից : Այդ բոլորը պէտք են՝ մի ազգի գրականութիւն եւ գրական մի արտադրութիւն ճշմարտապէս հասկանալու եւ բացատրելու համար : « Ամէն լուրջ քննադատութիւն , ասում է նա , — գրական մի հատուած հասկանալու եւ ուրիշներին հասկացնելու տեսակէտով — պէտք է թափանցի հեղինակի մտքի եւ հոգու մէջ , ծանաչի ժողովուրդը եւ ժամանակը » : Աւարկան հիմնովին ուսումնասիրելու հարկը Հերդերին թելադրում է ասել . « Եղէք հովիւ՝ հովիւների հետ , երկրագործ՝ երկրագործ ժողովրդի հետ . — եթէ դուք ուզում էք ծաշակել այն երկերը , հասկանալ , թափանցել այն հոգու մէջ , որ այդ բոլորը արտադրել է » :

Այս մտքերով առաջնորդուելով է , որ Հերդերը մտնում է Կերմանական իրականութեան մէջ , այն ազգի՝ որի նիւթական եւ քաղաքական շահերը թէեւ մասնաւորապէս իրեն չէ հետաքրքրում , բայց աշխատում է նրան գրական մեծութեան հասցնել , նրա անցեալը քրքրել եւ ապագան լուսարանել , որ-

95-1
42



պէսզի նա սխալանքների մէջ չընկնի եւ իւր ինքնատու-
թիւնը պահէ : Հերդերի համար՝ այդ օրուանից՝ այլեւս հա-
րիւրաւոր մասերի բաժանուած Գերմանիա չկաւ , այլ միայն մի
Գերմանիա , որի համար էլ որ խօսուած , գործում է , որի ա-
նունով էլ , որ նա հրահանգներ է տալիս : Գերմանական մեծ
ու փոքր պետութիւններ եւ իշխանութիւններ այլեւս նրա
համար գոյութիւն չունին , էլ չկան քաղաքականապէս ան-
ջատող սահմաններ . — կայ գրականապէս միացեալ Գերմանիա ,
Գերմանական մի ազգ , որ ունի իր որոշ անհրաժեշտութիւններ :

Այս ուղղութեամբ առաջ երթալով՝ Հերդերը կատարե-
լապէս ազգայնամոլ է դառնում , երբ՝ “ Գերմանական գլխից ”
դուրս եկած , Գերմանիայի որ եւ է մի մասի մէջ հրատարակ-
ուած գրական ինքնուրոյն մի գործ , թէեւ միջակ , շատ աւել-
ի բարձր եւ՝ ազգային ինքնուրոյնութեան տեսակէտից՝ շատ
աւելի թանկագին է համարում , քան օտար գրականութիւ-
նից եղած ամենալաւ թարգմանութիւնը :

Այդ դեռ բաւական չէ . Հերդերը բուն պայքար է մղում
ժամանակի նմանողութեան , հետեւողականութեան դէմ : Ին-
չու համար անպատճառ աշխատել նմանիչ եւ հետեւիչ Գրան-
սիական եւ անգղիական գրողներին , քանի որ դա բերում է ար-
ուեստականութիւն , անգի , անգոյն այնպիսի արտադրութիւն-
ներ , որոնք՝ ազգային շունչի եւ տաքութեան պակասութեան
պատճառով՝ մեռնում են դեռ չծնած : Փոխանակ կապկային
նմանողութեան , հարկաւոր է ինքնատուրքութեան մէջ մտնել
եւ այդպիսով զարկ տալ Գերմանական գրական մեծութեանը :

Հատ բնորոշիչ է Հերդերի հետեւեալ բացականչութիւնը .
“ Գերմանական ժողովուրդը երբ պիտի դադարի Յայտնութեան
Գրքի եռագլխանի հրէջը լինելուց , այն է՝ միաժամանակ Յոյն ,
Ֆրանսիացի եւ Րոմիացի : Երբ պէտք է ազգերի մէջ՝ մեզ
պատշաճաւոր տեղը բռնենք ” : — Ահա այս տեսակէտով

նա փայտալում , անհատում գովասանքներ է շուայլում Գեր-
մանական այն բոլոր գրագէտներին , որոնք ինքնուրոյն երկեր
են արտադրում , քան ստրկական նմանողութեան կամ թարգ-
մանութեան դիմում : “ Վերադարձանք դեպի թեոքիւն ,
որ ամեն բարոյքեան եւ ամեն ճշմարտութեան աղբիւրն է ” :
Հերդերը ահագին հետեւութիւններ է հանում Ռուսոյի այս
հաստատութիւնից : Բնութիւնը քեզ ասում է , յարում է , բըն-
նադատը , որ ամէն ազգ , ամէն ժողովուրդ ունի իր անհա-
տական ժողութեան իրաւունքը եւ առանձնայատուկ պայման-
ները , որ չէ կարելի արհամարհել եւ ոտքի տակ առնել . —
հակառակը կը լինէր բնութեան եւ ճշմարտութեան դէմ : Ռ-
բեմն , այդ կանոնի համաձայն , գրական տեսակէտով՝ ինչ որ
յոռաջ կգայ մի ժողովրդի ստեղծագործող մտքից , — դա կը
լինի թեւական եւ շա :

Գերմանական պատմութեան վրայ յետադարձ մի ակնարկ
ձգելով՝ Հերդերը քննութեան է առնում այն պատճառները ,
որոնք արդէլը հանդիսացան Գերմանական հանձարի ազատ
փիթութիւն : Խոչնդոտի ազգականերից մէկը նա համարում է
“ վերածնունդներ ” : Ահա իր պատճառաբանութիւնը : — “ Այդ
ժամանակից ի վեր ամեն բան մեկն ստացանք Լատիններից , թայց
նրանք էլ մեզանից խնային այն բոլորը , ինչ որ մեկն ունեւին ” :
Գերմանիան , ուրեմն , աւելի վնասել է , քան շահել : Աւելի
լաւ պիտի լինէր , եթէ Գերմանիան յամրաբայլ առաջ երթար ,
բայց ինքնուրոյն , որովհետեւ ամէն բանի մէջ Գրանսիացիներ
են նմանելով՝ մէկ դարուց աւելի է , որ Գերմանացիները
իրենց սեպհական երկրի մէջ ապրում են որպէս օտարական
ներ : Եւ այդ այն աստիճան , որ այն բարձրագոյն դասակար-
գերը , որոնք ամէն բանի մէջ բաժանուած են եւ իրարու ան-
համերաշխ , նրանք բոլորն էլ իրարու հետ խօսք մէկ են
արել , կարծես , արհամարհելու ազգային բարք ու վարքը եւ

աւանդութիւնները՝ որովհետեւ Գերմանացին իր սեպհական լեզուն թողած՝ խօսում, գրում, կարդում էր միայն Գրան-սերէն, իսկ այդ ձեով Գերմանական լեզուն՝ ուրեմն եւ Գերմանական ազգը՝ ամենամեծ վտանգի էր ենթարկւում:

«Ամենաժամը վտանգը, որին մի ազգ կարող է ենթարկուել, այդ պէս է՝ ասում է Հերզեր՝ որ նրանից յափշտակեն իր մտքի եւ լեզուի սեպհական բնաւորութիւնը... Մտածիր եւ կը տեսնես թէ Գերմանիան ի՞նչ անդարմանելի կորուստներ է կրել այդ տեսակէտով: Նրանի թէ Գերմանիան էլ, Միջին Գարու վերջերում, Մեծն Բրիտանիայի նման մի կղզի եղած լինէր: Այդ կղզիացումը՝ իր ինքնատուութեան համար՝ մի վահան կը լինէր: Չարիքը այնքան աւելի մեծ եղաւ, յարում է Հերզեր, որքան որ խորին մի տարբերութիւն, սուր մի հակընդդիմութիւն կար Ատինական եւ Գերմանական հանձարի միջեւ: Գրանսիական ազգեցութիւնը, աւելի քան փնտաղար եղաւ: Բայց հիմա ժամանակ է որ Գերմանիան ինքն իր տէրը լինի: «Ինչ որ ւնցած է, ւնցած է, այլեւս այդ մասին չխօսենք, բայց ապագային գծենք, շարունակենք մեր ուղին եւ մեր սեպհական մտածումնաբանութիւնը հսկենք այն՝ ինչ որ կարելի է: Թող ինչքան կուզեն՝ մեր ազգի, մեր գրականութեան, մեր շեզուի մասին շաւ կամ վաս խօսեն, —դրանք մերն են, դրանք՝ մեկ ինքնեւ ենք, եւ դա բաւական է...»:

Գերմանական ազգը պէտք է ունենայ իր պատմա—անհատական գոյութիւնը եւ նրա ազատ զարգացմանը ազգակ հանգիստացող բոլոր օրգանները, — այս իրեն ընդհանուր թէզ անելով, տեսնում էք, հայրենակիցներ, թէ մեր կուսակցութիւնը փիլիսոփայ Հերզերը որ աստիճան ծայրայեղութիւնների մէջ է ընկնում: Նա այդտեղ դառնում է մի ազգայնամոլ, մի թունդ հայրենասէր՝ որպէսզի Գերմանիան իր անկախութիւնը

եւ մեծութիւնը ունենայ ու ազգերի շարքերի մէջ իրեն յատուկ եւ պատշաճաւոր տեղը բռնէ: Բայց շարունակենք:

Հերզերը նոյն այդ գաղափարներով եւ միտումներով է առաջնորդւում՝ լեզուի մասին կատարած իր աշխատութիւնների եւ քննադատութիւնների մէջ:

Բերլինի գիտութեանց ձեմարանը մրցանակի էր արժանացրել Հերզերի «Ո՞րն է շեզուի ծագումը» անունով յիշատակազիրը: Հեղինակը, այստեղ, իր ժամանակի համար՝ բոլորովին նոր մտքեր է արձարծում:

—Լեզուները՝ ըստ Հերզերի, մարդկային արուեստի եւ պայմանադրութեան արտադրութիւններ են: Լեզուն օրգանական մի ամբողջութիւն է, որ ապրում, զարգանում եւ մեռնում է՝ որպէս կենդանի մի էակ: Մի ժողովրդի լեզուն ո՞չ այլ ի՞նչ է, եթէ ո՞չ, այսպէս ասած, այդ ժողովրդի հոգին, որ տեսանելի եւ շոշափելի է: Լեզուն մէջ է կենդանի կերպով արտայայտւում մի ժողովրդի բնաւորութիւնը, բարեխառնութիւնը, մտածելու եւ զգալու կերպը, — նրա ինքնատուութիւնը եւ անհատականութիւնը: Նուաճել մի լեզու, դա կնշանակէ մի անգամից նուաճել մի ամբողջ ցեղի հոգին:

Եւ երբ մի ազգ մի քանի դարով ծերացած է ու տէր է— ինչպէս Գրանսիան, Գերմանիան եւ Մեզղիան—մի երկարատե փառաւոր անցեալի, ապա նրա լեզուի բնաշրջումը իր պատմութեան բանալին է տալիս, որովհետեւ լեզուն երբեք անշարժ չի մնում, նա ապրում է մի եւ նոյն ազգի կեանքով:

Որո՞նք են այն մեծ գրողները, որոնցով իւրաքանչիւր ազգ պատիւ է համարում՝ պարծենալու, — նրանք՝ որոնց լեզուն ամենից աւելի ազգային է, նրանք՝ որոնք լայնօրէն օգտուել են ժողովրդական ազդիւրներից, նրանք՝ որոնց բերանով թուում է թէ ինքը ժողովուրդն է խօսում:

Այս դատողութիւնները այսօրուան համար շատ սովորական են, բայց նրանց արժէքը եւ հետեւանքը գնահատելու համար՝ աչքի առաջ պիտի ունենալ դարը եւ տիրող սովորութիւնը, — այն է՝ մայրենի լեզուի արհամարհանքը, որի դէմ շերդերը պայքար է մղում։ Այդ ուղղութեամբ առաջ երթալով, շերդերը մի կարգ կարեւոր յորդորներ է տալիս իր ժամանակի սերնդին։ Նա ասում է՝ որ մի գրողի առաջին պարտականութիւնն է լաւ իմանալ իր մայրենի լեզուն եւ չմեղադրել լեզուն խեղճութեան մէջ այն ժամանակ, երբ ինքը լեզուն հիմնովին չգիտէ եւ նրա գանձերի հետ խորապէս ծանօթ չէ։ «Նայեցէ՛ք, աւելացնում է, թէ ի՞նչ հարստութիւններ կան թաղուած Միջին Գարու Գերմանական լեզուի մէջ։ Մեր լեզուն աւելի հին բանաստեղծութիւններ ունի, քան իսպանականը, իտալականը, ֆրանսիականը եւ Անգլիականը։ Միայն մեր քաղաքական կազմակերպութիւնն է պատճառ, որ դարերի ընթացքում այդ դաշտը անմշակ է մնացել»։ Ու երիտասարդ բանաստեղծներին հրաւիրում է մշակելու այն դաշտը, որից իրենք առատ հունձք կարող են ստանալ։ Որովհետեւ մտապնդած այդ հին երգերի մէջ նրանք կտեսնեն Գերմանական հանձարը եւ մտածմունքի կորովը։

Մի ազգ իրաւունք չունի իր լեզուն չսիրել, որովհետեւ նրա մէջ կարծեցեալ կոպտութիւն կայ, որովհետեւ նա չունի այս եւ այն յղիւթիւնը, ինչ որ մի ուրիշ լեզուի յատկութիւնն է։ Ո՛չ, ամէն ազգ մտածում է՝ ինչպէս խօսում է, եւ խօսում է՝ ինչպէս որ մտածում է։ Մի լեզուի բոլոր ձևերը, բոլոր մասնականութիւնները իրենց գոյութեան իրաւունքը ունին ազգի սրտին մէջ, ուստի նրանք բոլորն էլ հաւասարապէս թանկագին են։

«Ո՛վ որ դիպչում է մի ժողովրդի լեզուին, եզրակացնում է շերդեր, նա դիպչում է նրա հոգուն եւ նրան վիրա-

ւորում է իր կեանքի աղբիւրների մեջ»։

Սա այն սկզբունքը չէ, հայրենակիցներ, որի համար անխթան յուսահատ եւ յամառ պայքար է մղուել 19-րդ դարում, — մի պայքար՝ որ դեռ շարունակուում է եւ թւում է թէ տակաւին վերջնականապէս գոցուած չէ նուաճուող ազգութիւնների համար։

Չեխերը, Ահագիները, Լատիշները, Ֆինլանդացիները, երբեմն էլ Մաճառները, Հայերը՝ պահանջել, կռիւել են, որպէսզի իրենց լեզուով խօսեն, գրեն, կարդան եւ ազատ կերպով ուսուցանեն։ Լեզուն նրանց կենսականութեան համար նոյն նշանակութիւնն է ունեցել, ինչ որ օգը՝ շնչելու։ Նուաճուող ազգութիւնները զգացել են, որ լեզուի խնդիրը իրանց համար մահու եւ կենաց խնդիր է, ուստի ամէն ձեւով աշխատել են, որ այդ կենսական ջիղը իրենց ձեռքից չխլուի, ու կեանքի համար կռիւը դարձել է յաճախ կռիւ՝ աղգային լեզուի համար։

Շերդերը երբ այդ տողերը գրում էր 115 տարի առաջ, ի հարկէ մտքովն անգամ չէր կարող անցնել, որ մի օր այդ սկզբունքը կդառնար իր հայրենիքի՝ Գերմանիայի դէմ։

Լսեցէ՛ք այն սրտառուչ կոչը, որ նա, 1794-ին, ուղղում էր կոտորակուած Գերմանիային, երբ նրա լեզուն ֆրանսիականից կլանուելու վտանգի մէջն էր, «... Մենք այժմ պէտք է կռուենք հարեւան մի ազգի դէմ, որպէսզի նրա լեզուն չկլանէ մերը։ Զարթիր, քնած Աստուած, դարթիր, Գերմանական ժողովուրդ, մի՛ թոյլ տուր՝ որ քո գոյութեանդ վահանը ձեռքիցդ յափշտակեն»։

Երբ խնդիրը վերաբերում է իր ազգի պատմա-անհատական գոյութեան իրաւունքին՝ մենք արդէն տեսնւմք թէ կոսմոպոլիտ շերդերը ի՞նչքան անհամբերող է դառնում։

Բայց այժմ հետեւենք նրան իր այն քաղաքական մտա-

ծումներն մէջ, ինչ որ մասնաւորապէս վերաբերում է Գերմանիայի քաղաքական կացութեանը :

Իրականութիւնը միութարական չէ: Հերդերը տեսնում է, որ ամէն ինչ այնտեղ բաժանուած է եւ շատ հանգամանքներ էլ նպաստում են այդ բաժանականութեանը, — կրօնք, ազանդներ, բարբառներ, նահանգներ, կառավարութիւններ, բարք ու վարքեր, իրաւունքներ՝ սրանք բոլորը անջատականութեան ազդակներ են :

Պատկերը ճշգրիտ է: Քաղաքական խնդիրներով ղեւզուող մի «հայրենասէր» համար՝ ընդհանուր դրութիւնը, արդարեւ, վրդովեցուցիչ է :

Հերդերը այս դէպքում չի ուզում գործ ունենալ պատերազմների պատահականութիւններից եւ գաշնադրութիւններից յառաջանալիք՝ քաղաքականապէս միացած Գերմանիայի հետ : Նրա փնտռածը, նրա որոնածը մի իդէալական Գերմանիա է : Քաղաքական անջատմանը, քաղաքական կապերին նա նշանակութիւն չէ տալիս : Նա ցանկանում է, նա աշխատում է տեսնել, առաջ բերել մի Գերմանիա, որի ցրուած մասերը, ուր էլ որ ընկած լինին, գաղափարապէս, մտաւորապէս իրարու հետ շաղկապուին եւ այդպիսով կազմեն միացեալ մի Գերմանիա : Գաղափարական, մտաւորական միացման գործի մէջ՝ Հերդերը չի ուզում զետեղել միայն իսկական Գերմանիայի անջատ բեկորներին, որոնք իրարուց զատուած, ապրում են որպէս ուրոյն քաղաքական իշխանութիւններ, այլ նա իր իդէալական, մտաւորապէս միացած Գերմանիայի մէջ է դնում եւ այն Գերմանացիներին, որոնք պատմական բախտի բերմունքով ցրուել, գաղթել, տարածուել են ուրիշ՝ օտար երկիրներ եւ այն տեղերն են հաստատել իրենց բնակութեան վայրը, որինսկ Ռուսաստան, եւայլն : Հերդերը շահագրգռուած է բոլոր այդ Գերմանացիներով, ուզում է որ նրանք ամէն էլ

մտաւոր փոխադարձ հաղորդակցութեան մէջ մտնելով՝ մի ընդհանուր հայրենիքի դաւակ եւ անդամ համարեն իրենց : Ռերմն ստեղծել իդէալական մի Գերմանիա, որ բարձր կանգնած լինէր գոյութիւն ունեցող քաղաքական սահմաններից : — Հերդերի համար գծուած նիւթական սահմանները ջնջուած էին գաղափարականի առաջ :

«Այդ ընդհանրական գործի համար, ասում է Հերդեր, կարիք չկայ ո՛չ կեդրոնական կառավարութեան եւ ո՛չ էլ մի մայրաքաղաքի : Ազգային կեանքը ոչինչ չէր շահել, եթէ կեդրոնանար միայն մի կէտի վրայ : Ընդհակառակը՝ որքան որ տարբեր կեդրոններ լինին, այնքան էլ աւելի ուժեղ կերպով կդարգանան Գերմանական ցեղի տարբեր ձեւերը, եւ դրանից բնաւ չէր փասուիլ ընդհանուր հայրենիքի բարոյական միութիւնը » :

Հիմա հասկանալի է թէ ինչո՞ւ համար Ռիգայում՝ Ռուսների մէջ, Ստրասբուրգում՝ Ֆրանսիացիների մէջ, Հերդերը ինքն իրեն իր քանն ե գգոււ, որպէս թէ ղէյմարում կամ Բէօյնիկսերգում լինէր : Բոլորը նրա համար մէկ են, որովհետեւ այդ վայրերում էլ Գերմանացիներ կան եւ նրանք մտաւորապէս մասն են կազմում այն իդէալական Գերմանիային, որ իր հաւաք արդէն գոյութիւն ունի : Թէեւ քաղաքականապէս ոչ-փրկեալ (Germania irre lenta) Գերմանիայի գաղափարը զեռ գոյութիւն չունի * , բայց Հերդերը, աշխարհագրական լայնութիւնները եւ գոյութիւն ունեցող քաղաքական սահմանները ջնջուած համարելով՝ գտնում է ծովածաւալ մի Գերմանիա, որի անջատ մասերը բոլորն էլ ունին նոյն լեզուն, բնաւորութիւնը, աւանդութիւնները :

Այդ քեզ մե՛ օրերում պաշտպանեց համագերմանական կուսակցութիւնը, որ աշխնան չարիք հասցրեց փոքր ազգութիւնների դասին :

հանձարը եւ կենսական յոգերը, ուստի եւ ջանք է թափում, պարտականութիւն է ստանձնում, որ նրանց բոլորին էլ « ինքնագիտակցութեամբ », բերի ու այդպիսով իդէալական Գերմանիան շոջափելի, իրական դառնայ եւ իր ուրոյն անհատական գոյութիւնը շարունակէ :

Երբ Հերդերը իր « իդէալական Գերմանիան » ստեղծագործելու երկունքի մէջն էր, այդ ժամանակ Գրանտիացիները գրաւեցին Ռէյնի ձախ ափը : Ըմբողջ Գերմանիան՝ ընդհանուր բոցավառումի ուրուականի առաջ՝ սարսափի մէջ էր :

Լեհանոստութիւնը, անապահոյութիւնը ամէնքի բաժինն էր, պատերազմը սպառնում էր իր թեւերը տարածել մինչեւ Գերմանիայի սիրտը :

Ճիշդ այդ ժամանակ Լեհաստանը բաժան-բաժան արեցին, եւ այս անգամ վերջնականապէս : Լեհական ճիւղը, ողբը՝ ալիքներ առած՝ տարածուած էր ամբողջ քաղաքակիրթ աշխարհ : Մարդիկ լսում, տեսնում էին թէ ինչպէս մի ժողովուրդ կողոպտւում է իր հարեւաններից պարզապէս նրա համար, որ թոյլ է եւ ինքն իրեն պաշտպանել չի կարողանում : Չկար իրաւունք, կար միայն յոյժ եւ ամէն ինչ խոնարհւում էր սրա առաջ — մի խօսքով՝ « յոյժը գերազանցում էր իրաւունքից » :

Պատմական այդ մեծ անցքերը չէին կարող իրենց որոշ ազդեցութիւնը չունենալ եւ Հերդերի վրան : Նա էլ ներքին երկիւղի գալարումներ ունեցաւ՝ իրականութեան այլանդակ պատկերի առաջ :

Հերդերը այժմ փորձով տեսաւ որ « մտաւոր կապերը » դեռ հերիք չեն մի ազգ անդամատուելուց պահպանելու համար : Նրա համար ակներեւ եղաւ, որ լեզուի, բարքերի եւ ավանդութիւնների համայնութիւնը անյաղթելի գրաւականներ չեն մի հայրենիք օտարի կլանող ձիրաններից ազատ եւ ապահով պահելու :

Իրականութեան ընծայած այս ախուր տեսարանի առաջ՝ Հերդերը ընդհանուրից բացառութիւն չկազմեց : Եւ արդարեւ, Գերմանական քանի քանի փիլիսոփաներ, որոնք կօսմանք լիտներ էին եղած իրենց կրթութեամբ եւ իրենց սրտի համար ամենամեծ գոհունակութիւն պիտի համարէին բաւականանալ միմիայն իդէալական մի հայրենիքով, սակայն նրանք՝ արտաքին անցքերի ճնշման ներքոյ՝ թողել էին իրենց առաջուան գաղափարը եւ սկզբունքները : Տիեզերական շատ համոզումներ, որ նրանց համար մինչ այդ՝ ամէն բանից բարձր եւ անփոփոխ էին նկատւում, — մի մոգական գաւազանով չբացել էին, երբ « օտարը », ոտք էր կոխել « հայրենի հողը » : Հոգեկան այդպիսի վիճակ էր ստեղծուած եւ Հերդերի համար, փորձութիւնը մեծ էր, — եւ Հերդերը տեղի տուեց, նա յետոյ ընկրկեց, չզիմացաւ իրականութեանը :

Քաղաքական այդ անցքերի տպաւորութեան ներքոյ՝ Հերդերը հետեւեալ տողերը գրեց. « Մի ազգ, որ ինքն իրեն հովանաւորելու եւ պաշտպանելու ընդունակ չէ, նա իրօք ազգ չէ եւ այդ անունը կրելու պատուին էլ արժանի չէ » : — Հերդերը այժմն ո՛րքան հեռու է իր այն դասական գաղափարից, որով հայրենասիրութիւնը զինուորական մի առաքինութիւն էր համարւում, եւ այն էլ միայն հին Սիտէի համար : Ո՛ր է նրա նախկին կօսմանք իտական հոյակապ արհամարհանքը : Նա այժմ « հայրենասէր » է, այս բառի 19-րդ դարու առումով :

Բայց մտածմունքի ի՞նչ ձեւերի միջից անցնելով է, որ Հերդերը ընկնում է « հայրենասիրական » այնպիսի զգացմունքների մէջ, որ առաջ իրեն պակասում էին : Նրա մտքի այդ բնաշրջումը (էփօլիցիա), եթէ չասեմ ընդլայնումը, աւելի քան հետաքրքիր է :

Նորից Մարդկութեան թէզը ձեռք առնելով՝ Հերդերը

ուզում է որոշել թէ ազգերը ինչպէս են ներկայանում, նրանք ինչ տեղ են բռնում Մարդկութեան ծոցի մէջ: — Հարցը բազմակողմանի վերլուծումների ենթարկելուց յետոյ՝ նա հասնում է այն համադրութեան թէ ազգերը Մարդկութեան մէջ ներկայանում են որպէս անհասներ, որպէս մի մեծ ընթանիքի անդամներ:

Հաս զփուար է, ասում է Հերդեր, մի ազգի ընդհանուր բնորոշող գծերը եւ յատկութիւնները կարճ ու իմաստալից բանաձևերով արտայայտել, նրա էութիւնը մի քանի բառերի մէջ խտացնել, որովհետեւ ամէն ազգ իր մէջ բովանդակում է բազմապիսի բնաւորութեան, շահերի, տեսակ տեսակ վարք ու բարքի եւ մտաւորականութեան տէր մարդիկ, բայց, այնու ամենայնիւ, — այդ կէտը խոստովանելով հանդերձ — նա գտնում է որ ազգերը Մարդկութեան մէջ երեւան են գալիս որպէս ուրոյն անհասներ, եւ այդ նրա համար՝ որ նրանցից ամէն մէկը առանձին վեր առած, կղզիացնելով միւսներից, ունի իր յատուկ ինքնատուրքիւնը, իր մասնաւոր ինքնուրոյնութիւնը, որով տարբերում, անջատում է ուրիշներից: Եւ ահա այդ ինքնատուրքիւնը, այդ ինքնուրոյնութիւնն է, որ նրան թոյլ չի տալիս հալուելու, ձուլուելու ամբողջութեան, այսինքն Մարդկութեան միւս մասերի մէջ, այլ նրա՝ այսինքն Մարդկութեան մի անհատ անդամը մնալու:

Նայեցէ՛ք, յարում է Հերդեր, մի թէ ամէն գրականութեան հիմունքները միեւնոյն յոյզերը եւ խոհերը չեն, եւ սակայն իւրաքանչիւր ազգ, որպէս անհաս, այդ բոլորը կրգում, արտացոլացնում, պատկերացնում է իրեն յատուկ լարերով եւ երանգաւորումներով: Եթէ Մարդկութիւնը ընդհանուր ներդաշնակութիւն է, ազգերն էլ նրա անհրաժեշտ երանգաւորումներն են:

Արդ, մի անգամ երբ ազգը անհաս է, ուրեմն նա, կրակացնում է Հերդեր, իր անհատական գոյութիւնը պահելու անձեռնմխելի իրաւունքը պիտի ունենայ: Գեո այդ բաւական չէ, հարկաւոր է որ նա զարգանալու, յառաջդիմելու ամէն պայմաններ ունենայ անարգել, որպէսզի իր ամբողջական ընդունակութիւնները, իր մտաւոր, բարոյական եւ ֆիզիքական բոլոր կարողութիւնները երեւան դնէ, — դա է պահանջում նրա էութիւնը, դա է պահանջում եւ Մարդկութեան շահը:

Եթէ այդպէս է ընդհանուրի նկատմամբ, մասնաւորում է Հերդեր, նոյնը պիտի լինի եւ Գերմանիայի, Գերմանական ազգի նկատմամբ, — նա էլ իրաւունք պիտի ունենայ՝ որպէս ազգ, որպէս Մարդկութեան մի անգամ ապրելու եւ յառաջ երթալու. քանի որ Գերմանական ազգի գոյութիւնը ո՛չ միայն Մարդկութեան նպատակին չի հակասում, այլ նրա լրացուցիչ մի մասն է կազմում: Այդ ազգը պիտի ապրի, որովհետեւ նա կենսունակ է, որովհետեւ բարոյական եւ ֆիզիքական այնպիսի յատկութիւններ ունի, որ նրան՝ որպէս Մարդկութեան մի անդամի՝ իրաւունք են տալիս ապրելու: — Եւ այստեղ Հերդերը վերահրկնում է Վէյրնիցի, Վուլերի, Շիլլերի կարծիքները, թէ Գերմանացիները որպէս ազգ՝ « անկեղծ », « ճշմարտախոս », « բարոյական », « քաջ », եւ « հաւատարիմ » են: Պատմութիւնից բազմաթիւ օրինակներ բերելով՝ նա երկարօրէն ծանրանում է « Գերմանական » այդ յատկութիւնների վրայ, կրակացնելով՝ որ եթէ մի ուրիշը նրա տեղը լինէր, անցեալ պատմութեան յուզումնալից շրջաններում, արդէն կորած, փճացած կլինէր, մինչդեռ նա կայ, գոյութիւն ունի՝ իր այդ բնորոշող յատկութիւնների համար: Եւ

Հէյնրի Հէյնէ եւ գերմանական մի քանի պատմիչներ այդ առթիւ համակարծիք չեն Հերդերի հետ:

ուրեմն, այդպիսի մի ազգ, Կարգկութեան այդպիսի մի անհատ-
անդամ՝ ինչո՞ւ իր գոյութիւնը չպահէ եւ յառաջ երթալու
պատշաճաւոր բոլոր օրգանները չունենայ : — Ոչ, նա պէտք է
ապրի, եւ հէնց այդ տեսակէտով է, որ Հերզերը դառնում է
հայրենասէր ու պաշտպան է հանդիսանում Գերմանիային
եւ Գերմանական ազգին :

Հերզերը ջերմապէս պաշտպան է հանդիսանում, իրա-
ւունք է համարում, որ Գերմանական Ազգը ապրի, որովհետեւ
նա համոզուած է թէ ամէն ժողովուրդ՝ իր ազգային բնաւո-
րութեամբ, իր բարեխառնութեամբ, ո՛չ միայն ընդհանուր
Կարգկութեան մի տարրն է կազմում, այլ նրանցից ամէն
մէկը որոշեալ միասիւս ունի կատարելիք համաշխարհային
պատմութեան մէջ : Եւ այդ տեսակէտից առաջնորդուելով՝ նա
դուրս է բերում այն հեռուութիւնը, որ այն բոլոր ազգերը,
որոնց միասիւսն վերջացած է՝ պէտք է տեղի տան աշխարհի
քաղաքական թափառաբեմից, կարգը ուրիշներին թողնելով :
Քայց մի ազգ, ուրեմն եւ Գերմանականը, չի կարող մեռնիլ,
չի կարող շքանալ, քանի որ նա կենսունակ է եւ դեռ
միասիւս ունի կատարելիք ընդհանուր Կարգկութեան մէջ : Եւ
սա դառնում է Հերզերի Գաղափար-Ոյժը, նրան տալիս է
արտաքոյ կարգի ոգեւորութիւն, նուանգ՝ Գերմանիայի եւ
Գերմանական ազգի համար աշխատելու : Ինչո՞ւ, — որովհետեւ
եթէ Գերմանական ազգը անդարձ կերպով կորչէր, հառաչում է
Հերզեր, գրանից Կարգկութիւնը խորապէս կլնասուէր եւ
քաղաքակրթութիւնը կանգ կառնէր, իսկ դա անկարելի է :
« Մենք ուշ ենք եկած, գրում է Հերզեր, լա՛ւ,
ուրեմն մենք է՛լ աւելի երիտասարդ ենք. է՛լ աւելի շատ բա-
ներ ունինք անելիք : Այն ժամանակ, երբ ուրիշ ազգեր
մտնում են հանգստեան մէջ, արտադրելով այն բոլորը, ինչի
որ իրենք ընդունակ էին, — մենք նոր ասպարէզ ենք մտնում » :

Սա է փիլիսոփայի եռանդուն հաւատքը իր երկրի, իր ազգի
նկատմամբ : Այսպիսով է, որ Կոսմոպոլիտիսմը եւ ազգային
զգացումը խառնուում, մէկ են դառնում : Այսպիսով է որ,
Հերզերի համար, Գերմանական իդէալը մէկ է Կարգկութեան
իդէալի հետ, եւ նրանք իրարու ներհակ տարրեր չեն հան-
դիսանում : Երբ այսպէս, ապա Գերմանիայի համար աշխա-
տելով՝ նա միաժամանակ աշխատում է եւ Կարգկութեան
համար :

« Հերզերը իր ժամանակի վրայ ազդել է թթմորի
ձեւով », գրել է Գերմանացի յայտնի պատմիչ Գերվինտսը :
Եւ արդարեւ, Հերզերը սովորացրել էր թէ ի՞նչ է Կարգ-
կութիւն, ի՞նչ՝ նրա իդէալը : Հասկացրել էր, որ Գերմանիան,
Գերմանական ազգը այդ Կարգկութեան մէկ անդամն էր, նրա
ծոցի մէջ պարիսպուած մէկ անհատը : Քարոզել, որ այդ
անհատը ապրելու, իր պատմա-անհատական գոյութիւնը
պահելու, զարգացնելու ամէն իրաւունք եւ պայման պիտի
ունենար : Նա փաստել էր, որ եթէ Գերմանական ազգը մեռ-
նէր, այդտեղ բարոյական մեծ պատասխանատուութիւն կար,
որովհետեւ նրա տեղը բաց կմնար եւ գրանից քաղաքակր-
թութիւնը, Կարգկութիւնը կտուժէր, քանի որ այդ ազգը
դեռ միասիւս ունէր կատարելիք :

Հերզերի սրտագին ցանկութիւնը, նրա փայտիայած իդէալն
էր, որ Կարգկութեան բոլոր անդամները, նրա ծոցի մէջ
բովանդակուած բոլոր անհատ-ազգերը ապրեն, զարգանան՝
ընդհանուր խաղաղութեան, տիեզերական ներդաշնակութեան
մէջ : Այդ բոլորը տեսլ էր նա, եւ իր ժամանակի սերունդը
լսել, ծծել, իւրացրել էր :

Քայց Հերզերը մի բան չէր ասել, այն՝ թէ երբ մի ազգի
պատմա-անհատական գոյութիւնը փտանցի է ննթարելու
Զօրաւորի Խրաւունքը ներկայացնող Սրի, Կոպիտ Ոյժի կողմից,

—այն ժամանակ ինչ պէտք էր անել, լուր՝ համակերպել,
թէ զէնքի, կուռի, ճանապարհը բռնել:

Փիլիսոփան այս մասին ոչինչ չէր ասել:

Եւ սակայն « քրիստոսի » պէս ազգող նրա փիլիսոփայու-
թիւնը զօրաւոր կերպով խմորել էր մտքերը եւ տուել իր որոշ
հետեւութիւնները:

Ու եկաւ մի ժամանակ (1813-1814), երբ Գերմանական
ազգը իր պատմա-անհատական գոյութիւնը պահելու կամ
չպահելու երկառածի (ղիլեմմա) առաջընդունեց, երբ հրա-
պարակ դրուեց իր լինել-չլինելու խնդիրը, —այդ ժամանակ
Գերմանիայի ամէն կողմերից նոր սերունդը, նոր երիտասար-
դութիւնը գունդագունդ ազատութեան գրօշի տակը վազեց,
սուր հանեց, զեւթ բարձրացրեց, արեան ճանապարհը բռ-
նեց, ու այդ ձեւով էր որ Մարդկութեան մէկ անհատ ան-
գամի գոյութիւնը ընդհանուր կորստից փրկեց:

Եթէ այդ ուղղակի չէր քարոզել շերտերը, բայց դա
հետեւում էր նրա փիլիսոփայութիւնից, նրա արտայայտած
խղիւղական « մտքերից:



ՀՀ Ազգային գրադարան



NL0147924

